Հավելված 3

# Հաշվետվություն

## Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի

(2020-2021 ուստարի)

Հաշվետու ժամանակահատվածում ԿԲԴՎ բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

***ա.Փաստաթղթերի մշակում և վերամշակում.***

1. Մշակել և հաստատման է ներկայացվել բաժնի կանոնադրությունը («ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման» բաժնի կանոնադրություն, հաստատված 30.09.2020, գիտական խորհրդի նիստում)
2. Լրամշակվել և քննարկման է ներկայացվել «ԵՊՀ ԻՄ-ում ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգը՝ կից փաստաթղթերով (Հաստատված է ԵՊՀ ԻՄ ԳԽ 25.12.2020 նիստում)
3. Մշակվել և քննարկման է ներկայացվել «ԵՊՀ ԻՄ-ում հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգը՝ կից փաստաթղթերով (Հաստատված է ԵՊՀ ԻՄ ԳԽ 31.03.2021 նիստում)
4. Մշակվել և քննարկման է ներկայացվել «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման» կարգը՝ կից փաստաթղթերով
5. Մշակվել և քննարկման է ներկայացվել «ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման» կարգը (Հաստատված է ԵՊՀ ԳԽ 30.04.2021 նիստում)
6. Վերանայվել է ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը (Հաստատված է ԵՊՀ ԳԽ 30.04.2021 նիստում):
7. Մշակվել և քննարկման փուլում է գտնվում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացվող պահանջները
8. Մշակման փուլում է գտնվում ԵՊՀ ԻՄ փաստաթղթաշրջանառության կարգը

9. Մշակման փուլում է գտնվում հետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդական ուղեցույցը
10. Մշակվում են վերապատրաստումների նոր ծրագրեր
11. Մշակման փուլում է ԵՊՀ ԻՄ վարչական, ինժեներատեխնիկական և ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման կարգը

*բ. Վերապատրաստումներ*

1. 2020թ. սեպտեմբերի 10-11-ին իրականացվել է **«Աշխատանքը Zoom հարթակում»** թեմայով **վերապատրաստման առցանց դասընթացը,որին** մասնակցել է ԵՊՀ ԻՄ-ի **35** դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 24 դասախոս, Տնտեսագիտության՝ 6 դասախոս, Բնական գիտությունների՝ 4 դասախոս, Կիրառական արվեստի՝ 1 դասախոս):
2. 2020թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 10-ը իրականացվել է Կրեդիտային համակարգով ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլի «**Տեսանյութերը որպես դասավանդման գործիք»** 12 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման առցանց դասընթացը, որին մասնակցել է 17 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 10 դասախոս, Տնտեսագիտության՝ 3 դասախոս, Բնական գիտությունների՝ 3 դասախոս, Կիրառական արվեստի՝ 1 դասախոս): Դասընթացի ավարտին կազմակերպված ստուգարքը հանձնել են 8 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 6 դասախոս, Տնտեսագիտության՝ 1 դասախոս, Բնական գիտությունների՝ 1 դասախոս):
3. 2021թ. հունվարի 21-ից 31-ը իրականացվել է Կրեդիտային համակարգով ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլի «Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում» 12 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման առցանց դասընթացը, որին մասնակցել է

23 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 12 դասախոս, Տնտեսագիտության՝ 5 դասախոս, Բնական գիտությունների՝ 5 դասախոս, Կիրառական արվեստի՝ 1 դասախոս): Դասընթացի ավարտին կազմակերպված ստուգարքը հանձնել են 23 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 12 դասախոս, Տնտեսագիտության՝ 5 դասախոս, Բնական գիտությունների՝5 դասախոս,Կիրառական արվեստի՝ 1 դասախոս):

***2021թ. փետրվարից ԵՊՀ ԻՄ դասախոսները սկսել են մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին.***

1. 2021թ. փետրվարի 2-ից 4-ը ԵՊՀ ԻՄ 19 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 8 դասախոս, Տնտեսագիտության՝ 4 դասախոս, Բնական գիտությունների՝ 7 դասախոս) դասախոսներ մասնակցել են «Առցանց դասավանդման հմտությունների զարգացում» վեբինարին:
2. 2021թ. ապրիլի 6-ից մայիսի 6 -ը ԵՊՀ ԻՄ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի 5 դասախոս մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ» մոդուլի 20 ակադեմիական ժամ տևողությամբ «Մեծածավալ տվյալների մշակում» կամընտրական դասընթացին :
3. 2021թ. ապրիլի 8-ից մայիսի 6-ը ԵՊՀ ԻՄ 5 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 2 դասախոս, Տնտեսագիտության՝ 2 դասախոս, Բնական գիտությունների՝ 1 դասախոս) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ընդհանուր կամընտրական դասընթացներ» մոդուլի «Հակամարտությունների ստեղծարար փոխակերպում» 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին:
4. 2021թ. ապրիլի 12-ից մայիսի 10-ը ԵՊՀ ԻՄ հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի 5 դասախոս մասնակցել են Կրեդիտային

համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ընդհանուր կամընտրական դասընթացներ» մոդուլի «Հասարակական երևույթներ.ինստիտուցիոնալացում և ինստիտուցիոնալ ճգնաժամ, կառավարման հիմնախնդիրներ» 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին:

5. 2021թ. ապրիլի 12-ից մայիսի 10-ը ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի 5 դասախոս մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն» մոդուլի «Թվային գործիքների ուսուցում» 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին:
6. 2021թ. ապրիլի 15-ից մայիսի 13-ը ԵՊՀ ԻՄ 5 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 2 դասախոս, Բնական գիտությունների՝ 1 դասախոս, արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի ամբիոն՝2 դասախոս) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ընդհանուր կամընտրական դասընթացներ» մոդուլի «Աղետների ռիսկերի կառավարում» 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին:
7. 2021թ. ապրիլի 15-ից մայիսի 13-ը ԵՊՀ ԻՄ 5 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 2 դասախոս, Տնտեսագիտության՝ 2 դասախոս, Բնական գիտությունների՝1 դասախոս) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Ընդհանուր կամընտրական դասընթացներ» մոդուլի «Միջանձնային հաղորդակցումը կրթական գործընթացում» 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին:

8. 2021թ. ապրիլի 23-ից մայիսի 21-ը ԵՊՀ ԻՄ 5 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 2 դասախոս, Տնտեսագիտության՝ 2 դասախոս, Բնական գիտությունների՝ 1 դասախոս) մասնակցել են Կրեդիտային համակարգով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի «Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն» մոդուլի «Մասնագիտական սթրեսների կանխարգելում և կառավարում» 10 ակադեմիական ժամ տևողությամբ կամընտրական դասընթացին:

***Երիտասարդ դասախոսների աջակցման և փորձի փոխանակման կենտրոնի շրջանակներում անց են կացվել հետևյալ հանդիպումներն ու վերապատրաստումները.***

2021թ. ապրիլի 12-29-ը ԵՊՀ ԻՄ օտար լեզուների ամբիոնի դասախոսների կողմից անց են կացվել 3 հանդիպում-քննարկումներ.

1. 2021թ. ապրիլի 12-ին և 19-ին կազմակերպվել է «Կորպուսային լեզվաբանություն» թեմայով հանդիպում-քննարկում՝ 4 ակադեմիական ժամ տևողությամբ, որին մասնակցել են Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 15 դասախոսներ:
2. 2021թ. ապրիլի 15-ին և 29-ին կազմակերպվել է «Ինքնության դրսևորումները պատմամշակութային համատեքստերում» 4 ակադեմիական ժամ տևողությամբ հանդիպում-քննարկում, որին մասնակցել են 13 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 12 դասախոս, Տնտեսագիտության՝ 1 դասախոս):
3. 2021թ. ապրիլի 17-ին և 28-ին կազմակերպվել է «Հաղորդակցության դիվանագիտություն» 4 ակադեմիական ժամ տևողությամբ հանդիպում-քննարկում, որին մասնակցել են 18 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 15 դասախոս, Տնտեսագիտության՝ 2 դասախոս, Բնական գիտությունների՝ 1 դասախոս):

4. 2021թ. ապրիլի 19-21-ը կազմակերպվել է «Ուսուցման կազմակերպումը Google Apps-ի և նրա գործիքակազմի միջոցով» 12 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացին, որին մասնակցել են 20 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 11 դասախոս, Տնտեսագիտության՝ 5 դասախոս, Բնական գիտությունների՝4 դասախոս): Դասընթացի ավարտին կազմակերպված ստուգարքը հանձնել են 12 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 7 դասախոս, Տնտեսագիտության՝ 3 դասախոս, Բնական գիտությունների՝2 դասախոս)
5. 2021թ. մայիսի 6-8-ը կազմակերպվել է «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված» թեմայով 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթաց, որին մասնակցել են 24 դասախոս (Հումանիտար գիտությունների ֆակուլտետ 13 դասախոս, Տնտեսագիտության՝ 5 դասախոս, Բնական գիտությունների՝ 6 դասախոս):
6. 2021թ. հուլիսի 7-ին կազմակերպել է «Հետպատերազմյան շրջանի սոցիալ-տնտեսական մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով 2 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթաց, որին մասնակցել են 10 դասախոս:

**գ.** ***Հանդիպում-քննարկումներ***

1. Պարբերաբար կազմակերպվել են առցանց հանդիպում-քննարկումներ 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացներ վարող դասախոսների հետ (նոյեմբերի 7, դեկտեմբերի 8), որոնց ընթացքում քննարկվել են հետազոտական թեմաների ընտրության, աշխատանքների պատրաստման, դրանց ներկայացման և գնահատման չափանիշների վերաբերյալ դասախոսների մոտեցումները և իրականացված աշխատանքները:
2. Պարբերաբար կազմակերպվել են առցանց հանդիպում-քննարկումներ 2020-2021 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի հետազոտական բաղադրիչ

պարունակող դասընթացներ վարող դասախոսների հետ, որոնց ընթացքում քննարկվել են հետազոտական թեմաների ընտրության, աշխատանքների պատրաստման, դրանց ներկայացման և գնահատման չափանիշների վերաբերյալ դասախոսների մոտեցումները և իրականացված աշխատանքները:

**դ.Կրթական ծրագրեր**

1. Պատրաստվել է «Դպրոցական մանկավարժությունը և մեթոդիկա» 2020-21 կրթական ծրագիրը
2. Վերանայվել է «Դպրոցական մանկավարժությունը և մեթոդիկա» 2021-23 կրթական ծրագիրը (վերջնարդյունքներ, նոր դասընթացներ են ավելացվել՝

   ա/ Կրթական տեխնոլոգիաներ դասընթացի անվանումը՝ Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ

   բ/մեթոդիկաների ժամաքանակի համամասնությունը

   գ/ավելացվել են թվով 7 նոր դասընթացների նկարագրիչներ՝

   1. Պատմության դասավանդման մեթոդիկա
   2. Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա
   3. Կենսաբանության դասավանդման մեթոդիկա
   4. Հայ եկեղեցու պատմության դասավանդման մեթոդիկա
   5. Հասարակագիտության դասավանդման մեթոդիկա
   6. ՆԶՊ դասավանդման մեթոդիկա
   7. Ֆիզկուլտուրայի դասավանդման մեթոդիկա
3. Վերանայվել և վերջնական տեսքի է բերվել «Հոգեբանություն» 2020 կրթական ծրագիրը (հետազոտական բաղադրիչ, վերջնարդյունքներ)
4. Վերանայվել և վերջնական տեսքի է բերվել «Ռուսաց լեզվի և գրականության» 2020 կրթական ծրագիրը (հետազոտական բաղադրիչ, վերջնարդյունքներ հիմնովին փոխվել են)
5. Վերանայվել և ստուգվել եմ 2021-2025 կրթական բոլոր ծրագրերը՝ առկա և հեռակա:

**Բաժնի վարիչ՝ Ն. Գրիգորյան**